ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6/1

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Նելլի Ալիխանյանը, Գագիկ Ասրյանը, Սեվակ Բադալյանը, Շավարշ Գյուրջինյանը, Զվարդ Ծատուրյանը, Արարատ Մարտիրոսյանը, Անահիտ Մեժլումյանը, Ժիրայր Միրզոյանը, Անահիտ Ջուլիակյանը, Վահրամ Սուքիասյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Միեր Պապյան, Մարտին Ապրեսյան, Վաղարշակ Գրիգորյան, Տիգրան Ավալյան, Աննա Նավասարդյան, Ալինա Ալավերդյան, Նարինե Պապյան, Աննա Թումանյան, Մելինե Պապյան

Նիստը վարում էր բերդ համայնքի ղեկավար՝ Աստղիկ Հակոբյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Մարտին Ապրեսյանը

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 09-Ի ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների, Բերդ համայնքի ավագանին **որոշում է՝**

1.Հաստատել Բերդ համայնքի ավագանու հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Զեկ. Տ. Ավալյան/

2)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Տ. Ավալյան/

3)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ՇԱՐԺԱԿԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ, ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՐԿԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Տ. Ավալյան/

4)ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022Թ. ԹԻՎ 30-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՆՈՐ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Մ. Ապրեսյան/

5)11-045-0240-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.15096 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ. Գրիգորյան/

6)ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՅԱՄԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԾԱԾԿՈՒՅԹԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ. Գրիգորյան/

7)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի ԹԻՎ 87-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ. Գրիգորյան/

8)<<ԴԱՐՄԱՆ ՀԵՐԲԱԼ>> ՍՊԸ-ԻՆ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 191-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ. Գրիգորյան/

9)11-002-0237-0027 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.13 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ. Գրիգորյան/

10)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ. Գրիգորյան/

11)ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 11-060-0134-0029 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0,21282 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ. Գրիգորյան/

12)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա. Հակոբյան/

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 103-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Զեկ. ՏԻԳՐԱՆ ԱՎԱԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 5.1կետերով, 83-րդ հոդվածի 2-րդ մասովև «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով,

Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի <<ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի 2025 թվականի տեղական բյուջեն հաստատելու մասին>> N 438-Ն որոշման մեջ և հավելվածներում 1 – ում և 2 – ում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ՀՀ տավուշի մարզի Բերդ խոշորացված համայնքի՝ սուբվենցիոն ծրագրերով ճանապարհների կապիտալ վերանորոգման մասնակցության համար Այգեձորաբնակների և Մովսեսաբնակների կողմից նվիրատվություններ են կատարվել ՝Այգեձոր բնակավայրում՝ 5 500 000(հինգ միլիոն հինգ հարյուր հազար)ՀՀ դրամի և Մովսես բնակավայրում՝ 1 181 900(մեկ միլիոն մեկ հարյուր ութսունմեկ հազար ինը հարյուր)ՀՀ դրամի ,ընդհանուր 6 681 900(վեց միլիոն վեց հարյուր ութսունմեկ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ գումարով:

Նշված գումարն ավելացվում է

1.համայնքի բյուջեի եկամուտներ /հատված 1/ տող 1381-ի ֆոնդային մասի <<Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված արտաքին աղբյուրներից>>

2.Համայնքի բյուջեի ծախսեր (հատված 2/տող 2451/ (04.05) ճանապարհային տրանսպորտ:

2.Համաձայն կառավարության 28.08.2025թ թիվ 1223-Ն որոշմամբ Բերդ համայնքին հատկացվել է 371357.3 ՀՀ դրամ կապիտալ սուբվենցիա որից

26148.0 ՀՀ դրամը նոր մեքենասարքավորումների ձեռքբերման համար,345209.3 ՀՀ դրամը Վ.Կ.Աղբյուր,Նորաշեն,Արծվաբերդ բնակավայրերի խմելու ջրի ակունքների և հիմնական ջրագծի 15(տասնհինգ)կմ կառուցում:

Նշված գումարն ավելացվում է

1.բյուջեի եկամուտներ/հատված1/տող 1261 <<Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)>>

2. 26 148.0 /քսանվեց միլիոնմեկ հարյուր քառասունութ հազար/ ՀՀ դրամը ՝Համայնքի բյուջեի ծախսեր /հատված 2/ տող 2451-ի/04.05.01.51/<<Ճանապարհային տրանսպորտ >>:

3.345 209.3/երեք հարյուր քառասունհինգ միլիոն երկու հարյուր ինը հազար երեք հարյուր/ՀՀ դրամը՝համայնքի բյուջեի ծախսեր /հատված2/տող 2631/06.03.01/ջրամատակարարում:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 104-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՏԻԳՐԱՆ ԱՎԱԼՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ, 42-րդ կետերով,

Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Սուբվենցիոն ծրագրով ձեռք բերված ՀՀ Տավուշի մարզի Բերդի համայնքապետարանի կարիքների համար Ավտոմեքենայի ձեռքբերման թիվ N EVMG25-55 պայմանագով հատկացված JAC T6 HFC1037DKSVP306Q մեքենան՝ մեկ հատ, սերիական համարը՝ LJ11PABD7RC013051 , արտադրության տարեթիվը՝ 2025թ., 12 900 000 (տասներկու միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ արժեքով , ընդգրկել Բերդ համայնքի գույքացանկում:

2.Գույքացանկում ընդգրկված գույքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել <<Բերդի կոմունալ ծառայություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

3.Կատարել տրանսպորտային միջոցի հաշվառում ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստկան ության» բաժանմունքում:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 105-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ՇԱՐԺԱԿԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ, ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՐԿԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՏԻԳՐԱՆ ԱՎԱԼՅԱՆ)

ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի տարբեր բնակավայրերի բնակիչներ դիմել են Բերդի համայնքապետարան, որ վճարել են իրենց կամ իրենց հարազատների անվամբ գրանցված շարժական և անշարժ գույքերի, հողի և գույքի վարձավճարների հարկերի գծով առաջացած պարտքերը և խնդրել զեղչել առաջացած տույժերը:

Ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասով, 245-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ մասի 1-ին կետով, 5-րդ, 8-րդ մասերի պահանջներով և <<Գույքահարկի և հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին>> 28.04.2012թ. ՀՀ օրենքով,

Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Տավուշի մարզի Բերդի համայնքապետարան դիմած բնակիչների անվամբ գրանցված շարժական և անշարժ գույքերի, հողի և գույքի վարձավճարների հարկերի գծով տրամադրել արտոնություններ՝ համաձայն հավելված 1-ի:
2.Մարել հավելված 1-ի N 1743 վարձավճարի գծով կուտակված 600 000/վեց հարյուր հազար/ՀՀ դրամի չափով պարտավորությունները և լուծարել ԱՁ Արմեն Պետրոսյանի հետ կնքված տարածքի վարձակալության թիվ 1743 պայմանագիրը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 106-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022Թ. ԹԻՎ 30-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՆՈՐ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐՏԻՆ ԱՊՐԵՍՅԱՆ)

Նկատի ունենալով, որ ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում 24.10.2024թ. կատարվել են փոփոխություններ սոցիալական պաշտպանության, ծառայությունների տրամադրման և կարիքավոր ընտանիքների աջակցության բնագավառում, անհրաժեշտություն է առաջացել սահմանել ընտանիքների կարիքավորության նոր չափորոշիչներ և կարգ:
Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով.

Համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել Բերդ համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու նոր չափորոշիչները և կարգը՝ համաձայն հավելվածների:
2.Ուժը կորցրած ճանաչել Բերդ համայնքի ավագանու 13.12.2022թ. «Բերդ համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 30-Ն որոշումը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 107-Ա)*

ԼՍԵՑԻՆ

11-045-0240-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.15096 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 143-րդ հոդվածի 5-րդ և 30-րդ մասերով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064 որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի /բնակավայրի/ գլխավոր հատակագծի փոփոխության վերաբերյալ 20.08.2025թ. N 2/փ-266 դրական եզրակացությունը, **Բերդ համայնքի ավագանին որոշում է՝**

1.Հաստատել քաղաքացի Արամ Պապինի Ավալյանին պատկանող, Մովսես գյուղի վարչական տարածքում գտնվող, 0.15096 հա մակերեսով՝ 11-045-0240-0001 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայր գործառնական նշանակության հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը, որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման

և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր գործառնական նշանակության հողերի:

2.<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 143-րդ հոդվածի 14-րդ և 30-րդ մասերով սահմանված կարգով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում, արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 108-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՑԱՄԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԾԱԾԿՈՒՅԹԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀօրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, ՀՀ Կառավարության 23 հոկտեմբերի 2000 թվականի N 656 -Ն որոշման հողային հաշվեկշիռը կազմելու կարգով և ՀՀ Կառավարության 11 ապրիլի 2019թ. N 431-Ն որոշման ՀՀ ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգման կարգով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել՝Բերդ համայնքի հողային ֆոնդի առկայության և բաշխման (ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի, գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների) հաշվետվությունը ու ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգումը, համաձայն հավելվածի (ՁևN 22, 22ա) և աղյուսակի:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 109-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի ԹԻՎ 87-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 19-ի թիվ 87-Ա որոշման մեջ կատարել հետևյալ ուղղումը՝

1) Ավագանու որոշման առաջին կետում կատարել ուղղում՝ հեռացնել <<լցակույտի և ավելացված հողի պահեստավորման համար>> բառերը:

Որոշումը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1. Տալ համաձայնություն 25 տարի ժամկետով,վարձակալությամբ տրամադրելու Տավուշի մարզի, Բերդ համայնքի, Վերին Կարմիր Աղբյուր գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 11-061-0103-0145 ծածկագրով, 0.55762 հա մակերեսով արոտավայրը:

2. Սահմանել 0.55762 հա մակերեսով արոտավայրի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը 18 000 /տասնութ հազար/ՀՀ դրամ:

3. Վարձակալության պայմանագիրը կնքել՝ պայմանով՝ 5 /հինգ/ տարի հետո վարձավճարի փոփոխության հնարավորության համաձայնության չգալու դեպքում՝ պայմանագիրը լուծարել:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 110-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

<<ԴԱՐՄԱՆ ՀԵՐԲԱԼ>> ՍՊԸ-ԻՆ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 191-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-469-րդ հոդվածներով, 606-րդ հոդվածի դրույթներով, հաշվի առնելով Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 37-րդ հոդվածի 1-ին մասով, Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող, Տավուշի մարզ, Բերդ համայնք, գյուղ Տավուշ 1-ին փողոց 31 հասցեում գտնվող վարչական շենքի 1-ին հարկի N12 սենյակը՝ 32.2 ք.մ, ընդհանուր՝ 32.2 ք.մ մակերեսով, առանց մրցույթի, ամսական 32 200 /երեսուներկու հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ հաշվարկով, տարեկան՝ 386 400/ երեք հարյուր ութսունվեց հազար չորս հարյուր/ ՀՀ

դրամ վարձավճարով, 5 տարի ժամկետով տրամադրել <<ԴԱՐՄԱՆ ՀԵՐԲԱԼ>> ՍՊԸ-ին՝ որպես պահեստ օգտագործելու նպատակով:

2. Ուժը կորցրած ճանաչել Բերդ համայնքի ավագանու 18 հոկտեմբերի 2023թվականի N191-Ա որոշումը

3.Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է սույն որոշման 1-ին կետում նշված անձանց կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է
մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 111-Ա)*

ԼՍԵՑԻՆ

11-002-0237-0027 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.13 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 143-րդ հոդվածի 5-րդ և 30-րդ մասերով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064 որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի /բնակավայրի/ գլխավոր հատակագծի փոփոխության վերաբերյալ դրական եզրակացությունը, Հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի թիվ 01/11.1/12742-2025 գրության դրական եզրակացությունը և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել համայնքային սեփականություն հանդիսացող 0.13 հա մակերեսով՝ 11-002-0237-0027 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը, որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք գործառնական նշանակության հողերի:

2.<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 143-րդ հոդվածի 14-րդ և 30-րդ մասերով սահմանված կարգով հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում, արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 112-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ, 42-րդ կետերով, «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2017 թվականի հունիսի 9-ի ՀՀ օրենքի 1-ին հոդվածով և 18.53 հավելվածով, **Բերդ համայնքի ավագանին որոշում է՝**

1.Տալ համաձայնություն Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող, Չինարի գյուղի պոմպակայանի ջրագիծը և սարքավորումները 90 522 000 /իննսուն միլիոն հինգ հարյուր քսաներկու հազար/ ՀՀ դրամ նախահաշվային արժեքով և Նորաշեն գյուղի ոռոգման ջրագիծը նախահաշվային 72 204 900 /յոթանասուներկու միլիոն երկու հարյուր չորս հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ արժեքով ընդգրկել Բերդ համայնքի գույքացանկում:

2.Գույքացանկում ընդգրկված գույքը անհատույց օգտագործման իրավունքով նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 113-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 11-060-0134-0029 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0,21282 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 76, 77, 78, 80, 81 հոդվածներով և ՀՀ Կառավարության 2001թ. ապրիլի 12-ի Պետական և համայնքային սեփականություն

հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 37-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն 25 տարի ժամկետով,վարձակալությամբ տրամադրելու Տավուշի մարզի, Բերդ համայնքի, Վարագավան գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 11-060-0134-0029 ծածկագրով, 0.21282 հա մակերեսով արոտավայրը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով:

2. Սահմանել 0.21282 հա մակերեսով արոտավայրի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը 6000 /վեց հազար/ՀՀ դրամ:

3. Ուժը կորցրած ճանաչել Բերդ համայնքի ավագանու 13 փետրվարի 2025 թվականի N 09-Ա որոշումը

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 114-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, **Բերդ համայնքի ավագանին որոշում է՝**

1.ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի հոկտեմբերի ինը՝ ժամը 16:00:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 115-Ա)*

Ավագանու անդամներ

ՀԱՄԱՅԱԿ ԱԴԱՄՅԱՆ

ԱՆՆԱ ԱՎԱԼՅԱՆ

ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՄԱԿԱՐՅԱՆ

ԱՆՆԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ԱՐԱՄ ՆԻԳՈՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՊԱՊՅԱՆ

ԱՐՏԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՍԱՖԱՐՅԱՆ

Բերդ համայնքի ղեկավար

ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Մարտին Ապրեսյանը

_____